ՀՏԴ : 947.922+947.925
Doi:10.54503/0135-0536-2023.2-274

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ՝ 1919 Թ. ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

1918 թ. մայիսին՝ Հայաստանի անկախության վերականգնումից հետո, նորաստեղծ հանրապետության առջև ծառացած առանցքային խնդիրներից մեկը հարևան պետությունների հետ սահմանների որոշման հարցն էր: Հատկապես սուր էր Հայաստանի և Ադրբեջանի միջև եղած հակասությունը, որի հիմնական պատճառը Լեռնային Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի պատկանելության վերաբերյալ վեճերն էին: Դրանք այնքան խորն էին, որ 1918–1920 թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունը և Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը միմյանց սահմանները ճանաչելու մասին որևէ համաձայնագիր կամ պայմանագիր չեն ստորագրել:

Հայ-ադրբեջանական հակամարտության վճռորոշ հանգրվաններից էր 1919 թ. երկրորդ կեսը: Տեղի տալով Անդրկովկասում բրիտանական հրամանատարության հորդորներին և ադրբեջանական վերջնագրերին՝ 1919 թ. օգոստոսի 12–22-ին Շուշ գյուղում տեղի ունեցած Արցախի հայության 7-րդ համագումարը որոշում կայացրեց փոխզիջումային ճանապարհով համաձայնության գալ Ադրբեջանի հետ: Համագումարի կողմից ընտրված պատվիրակությունը օգոստոսի 22-ին Ադրբեջանի կողմից Ղարաբաղի գեներալ-նահանգապետ նշանակված Խոսրով-բեկ Սուլթանովի հետ ժամանակավոր համաձայնագիր ստորագրեց, որի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղը ժամանակավորապես (մինչև Փարիզի հաշտության վեհաժողովի կողմից հարցի վերջնական որոշումը) ընդունեց Ադրբեջանի իշխանությունը՝ ապահովվելու էր հայերի իրավունքները, Ղարաբաղի գեներալ-նահանգապետությանը կից ստեղծվելու էր 6 անդամից (3 հայ և 3 մուսուլման) կազմված խորհուրդ, որի մասնակցությամբ ու վերահսկողությամբ էին լուծվելու կարևոր հարցերն ու այլն[1]: Սակայն ադրբեջանական կողմը կարճ ժամանակ անց խախտեց պայմանավորվածությունները:

Ոգևորվելով Ղարաբաղը, թեկուզ ժամանակավոր, իրեն ենթարկվելու հանգամանքից՝ Ադրբեջանը գործուն քայլեր ձեռնարկեց զենքի ուժով Զանգեզուրում իր իշխանությունը հաստատելու նպատակով: Շարուր–Նախիջևանում կազմակերպված մուսուլմանական խռովությունների պատճառով սույն տարածաշրջանը ևս փաստացի դուրս էր եկել Երևանի վերահսկողությունից: Այն է՝ մերկացել էր Զանգեզուրի թիկունքը:

1919 թ. սեպտեմբերի կեսերից Ադրբեջանը սկսեց պատրաստվել Զանգեզուրի դեմ ռազմական արշավանքի՝ ադրբեջանական բանակի ընդհանուր

** Ներկայացվել է 12. VI. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

[1] Нагорный Карабах в 1918–1923 гг.: Сборник документов и материалов, отв. ред. В. А. Микаелян, Ереван, 1992, с. 323–327.

հրամանատար, գեներալ Ալի-Աղա Շիխլինսկու և Խոսրով-բեկ Սուլթանովի ղեկավարությամբ կենտրոնացնելով կանոնավոր զորամասերն ու քրդական անկանոն ջոկատները: Փոխարենը՝ հայկական կառավարությունը կողմ էր արտահայտվում գոյություն ունեցող խնդիրները բանակցային ճանապարհով լուծելուն: Ասվածի հավաստումն է երկու հանրապետությունների միջև առկա վեճերը լուծելու նպատակով հայ-ադրբեջանական կոնֆերանս հրավիրելու մասին ՀՀ արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Խատիսյանի՝ 1919 թ. հոկտեմբերի 7-ի դիմումն իր ադրբեջանցի պաշտոնակից Մամեդ Յուսուֆ Ջաֆարովին, ինչպես նաև իր կառավարության անունից Բաքվում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանի հոկտեմբերի 15-ի դիմումը Ադրբեջանի վարչապետ Նասիբ-բեկ Ռսուբբեկովին[2]*:*

Տևական պատրաստությունից և տեղային մարտերից հետո՝ արդեն նոյեմբերի 4-ին, ադրբեջանական զինուժը Շուշիի, Ջաբրայիլի ու Նախիջևանի կողմերից լայնածավալ հարձակում սկսեց Զանգեզուրի հայկական բնակավայրերի վրա՝ գրավելով Բայանդուր, Խնածախ, Կոռնիձոր, Տեղ և այլ գյուղերը: Նրանց հիմնական նպատակը Գորիսը գրավելն էր: Սակայն ադրբեջանցիների հաջողությունը ժամանակավոր էր. անակնկալ հարձակումից սթափված՝ հայկական զորաջոկատներն Արսեն Շահմազյանի ու Գարեգին Նժդեհի հրամանատարությամբ նոյեմբերի 6-ին հակահարձակման անցան՝ հաջորդ օրերին ադրբեջանական ուժերին ստիպելով մեծ կորուստներով վերադառնալ ելման դիրքեր[3]*:*

Հայ-ադրբեջանական հակամարտությունը Զանգեզուրում լայնածավալ պատերազմի հանգեցնելու հեռանկարն անհանգստություն էր առաջացնում Թիֆլիսում գտնվող բրիտանական ու ամերիկյան առաքելությունների ղեկավարների և Վրաստանի կառավարության մոտ: Նոյեմբերի 4-ին Վրաստանի արտաքին գործերի նախարար Եվգենի Գեգեչկորին իր հայ և ադրբեջանցի պաշտոնակիցներին զգուշացրեց զենքի ուժով խնդիրները լուծելու անթույլատրելիության մասին, իսկ նոյեմբերի 13-ին բրիտանական ներկայացուցիչ Օլիվեր Ուորդրոպն ու Դաշնակիցների գերագույն հանձնակատարի փոխանորդ, ամերիկացի գնդապետ Ջեյմս Ռեյը երկու երկրների կառավարություններին հրահանգեցին անմիջապես դադարեցնել արյունահեղությունը: Արդեն նոյեմբերի 16-ին Ռեյը ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանին և Ադրբեջանի վարչապետ Ն. Ռսուբբեկովին առաջարկեց Թիֆլիս ժամանել ու նոյեմբերի 20-ին իր հետ հանդիպել: Ռեյի մասնակցությամբ տեղի ունեցած չորսօրյա բանակցություններից հետո՝ նոյեմբերի 23-ին, Խատիսյանը և Ռսուբբեկովը ռազմական գործողություններին վերջ տալու ու նոր ընդհարումների չդիմելու մասին համաձայնագիր ստորագրեցին, որը հիմք հանդիսացավ դեկտեմբերի 14-ին Բաքվում հայ-ադրբեջանական կոնֆերանսի գումարման համար: Կոնֆերանսում Ադրբեջանի պատվիրակությունը ղեկավարում էր նախկին վարչապետ Ֆաթալի Խան-Խոյսկին, ՀՀ պատվիրակությունը՝ պառլամենտի անդամ Մար-

---

[2] *Յու. Վ. Ղուլյան. Հայաստան–Ադրբեջան հարաբերությունների պատմությունից, Երևան, 2009, էջ 265–266:*

[3] *Ռ. Գ. Հովհաննիսյան. Հայաստանի Հանրապետություն, հ. II, Երևան, 2014, էջ 256–258, Ա. Հ. Սիմոնյան. Զանգեզուրի գոյապայքարը 1917–1920 թթ., Երևան, 2017, էջ 489–530:*

տիրոս Հարությունյանը: Առանց էական արդյունք արձանագրելու՝ դեկտեմբեր 23-ին կոնֆերանսն ընդհատվեց՝ Թիֆլիսում աշխատանքները շարունակելու նպատակով: Սակայն այդպես էլ չվերսկսվեց[4]:

Հրապարակվող փաստաթուղթը Զանգեզուրում ծավալվող պատերազմական իրադարձությունների ընթացքում Վրաստանի կառավարության, ԱԳ նախարարության, Բաքվում և Երևանում վրացական դիվանագիտական ներկայացուցիչների 1919 թ. հոկտեմբերի 22-ից նոյեմբերի 17-ի գրագրություններն են, որոնք նոյեմբերի 20–23-ին ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանի և Ադրբեջանի վարչապետ Ն. Ուսուբբեկովի հանդիպման նախօրեին Վրաստանի արտաքին գործերի նախարարության ինֆորմացիոն բաժնում ի մի է բերվել: Այն հնարավորություն է տալիս հայ-ադրբեջանական հակամարտությանը ծանոթանալ երրորդ կողմի, այս դեպքում՝ Վրաստանի տեսանկյունից: Հայ-ադրբեջանական հակամարտությունը Զանգեզուրում լայնածավալ պատերազմի վերածվելու հեռանկարն անհանգստություն էր առաջացնում Թիֆլիսում: Վրաստանի կառավարությունը ելնում էր այն կանխադրույթից, որ անդրկովկասյան հանրապետությունների միջև պատերազմական գործողություններն ու շարունակական արյունալի ընդհարումները կարող են բացասաբար ազդել հանրապետությունների միջազգային վարկանիշի վրա, խոչընդոտել նրանց դե յուրե ճանաչմանն ու հանգեցնել անկախության կորստի: Հենց այս հանգամանքով է պայմանավորված Զանգեզուրում հայ-ադրբեջանական զինված ընդհարման խնդրում վրացական կողմի սկզբունքային խաղաղարար մոտեցումը:

«Զանգեզուրի շուրջ» խորագիրը կրող հրապարակվող փաստաթուղթը պահվում է Վրաստանի ազգային արխիվի (ՎԱԱ) թիվ 1864 ֆոնդում (Արտաքին գործերի նախարարություն): Այն վրացերենից հայերեն է թարգմանել Ջեննի Թամարյանը՝ հնարավորինս հարազատ մնալով բնագրին: Տեքստում մեր կատարած հավելումները բերվում են ուղղանկյուն փակագծերում ([ ]):

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ,
ՋԵՆՆԻ ԹԱՄԱՐՅԱՆ

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՇՈՒՐՋ

Հոկտեմբերի 22-ին Վրաստանի արտաքին գործերի նախարարը[5] Ադրբեջանի կառավարությունում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչից[6]

---

[4] *Ս. Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 353–355, Ա-Դո. Հայության երկունքը, Երևան, 2019, էջ 670–671, Ռ. Գ. Հովհաննիսյան. նշվ. աշխ., էջ 259–264, 273–276:*

[5] *Գեգեչկորի Եվգենի (1882–1954) – 1918 թ. նոյեմբերից 1921 թ. փետրվարը՝ Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության արտաքին գործերի նախարար: 1919 թ. աշնանը կարևոր դեր է կատարել Զանգեզուրում հայ-ադրբեջանական հրադադարի հաստատման գործում:*

[6] *Ալչիբայա Գրիգոլ (1881–1957) – 1919–1920 թթ. եղել է Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչը Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունում, իսկ 1920–1921 թթ.՝ Խորհրդային Ադրբեջանում:*

ստանում է հետևյալ հեռագիրը. «Կառավարությունը որոշեց Զանգեզուր ուղարկել յոթ հազար տարբեր ազգություններից բաղկացած զորք՝ [Խ.] Սուլթանովի[7] կարգադրության տակ՝ գեներալ [Ա.] Շիխլինսկու[8] հրամանատարությամբ: [Խ.] Սուլթանովն ունի մինչև հինգ հազար քուրդ և երեք հազար ապստամբ նախիջևանցիներից բաղկացած զորք: Բայազետ-Սուրմալուի շրջանում հայտնվել են նաև օսմանյան ջոկատներ: Ադրբեջանական բանակը հարձակման անցավ [հոկտեմբերի] 19-ին, իսկ մյուսները հարձակվելու են այս օրերին: Ռազմական երթուղին անցնելու է Գյանջա-Թարթար-Աղդամ-Շուշի-Գորիս գծով: Գորիսում կա հայկական երկու գումարտակ՝ չորս թնդանոթներով՝ Փիրումովի գլխավորությամբ: Ադրբեջանական բանակը կարող է նշանակված վայր հասնել տասը օրից: Բախումն անխուսափելի է: Միջոցներ եմ ձեռնարկում հարցը խաղաղ ճանապարհով լուծելու համար:

Խնդրում եմ միջոցներ ձեռք առնել պատերազմը կանխելու համար:

[Գ.] Ալշիբայա»:

Հոկտեմբերի 23-ին Բաքվում Վրաստանի ներկայացուցիչ պարոն [Գ.] Ալշիբայան ստանում է հետևյալ հեռագիրը. «Ադրբեջանի կողմից Զանգեզուրը գրավելու համար զորք ուղարկելն անխուսափելիորեն կհանգեցնի Ադրբեջանի և Հայաստանի միջև զինված հակամարտության: Նման բախման արդյունքն ուղղակիորեն աղետալի կլինի ողջ Անդրկովկասի համար: Մինչդեռ մեր հարցը բարձրացված է Փարիզի համաժողովի օրակարգում, այստեղ երկու ազգերի բախումը կխաթարի մեր անկախության գործընթացը: Ձեր պարտքն է նախարարի անունից ստանձնել բոլոր միջոցառումները՝ արյունահեղությունը կանխելու համար: [Մ.] Ջաֆարովին[9] փոխանցեք նախարարի տեսակետը և այս հարցի հետ կապված ամեն մի մանրունք:

Նախարարի տեղակալ՝ [Ն.] Քարցիվաձե»[10]:

Հոկտեմբերի 24-ին Երևանում մեր դիվանագիտական ներկայացուցիչ [Գ.] Մախարաձեին[11] ուղարկվել է հետևյալ հեռագիրը. «Հոկտեմբերի 22-ին Բաքվից [Գ.] Ալշիբայան հեռագրով մեզ տեղեկացնում է հետևյալը. «Ես ձեզ տեղ-

---

[7] Սուլթանով Խոսրով-բեկ (1879–1947) – 1918 թ. մայիս-հունիսին՝ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության ռազմական նախարար: 1919 թ. հունվարի 15-ին Ադրբեջանի կողմից նշանակվել է Ղարաբաղի գեներալ-նահանգապետ:

[8] Շիխլինսկի Ալի-Աղա (1863–1943) – 1918 թ. դեկտեմբերից 1920 թ. ապրիլն Ադրբեջանի ռազմական նախարարի օգնական, ադրբեջանական բանակի հրետանու գեներալ:

[9] Ջաֆարով Մամեդ Յուսուֆ (1885–1938) – 1918 թ. մայիս-հունիսին եղել է Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության առևտրի ու արդյունաբերության նախարար, ապա՝ նշանակվել Վրաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ: 1919 թ. մարտ-դեկտեմբերին եղել է Ադրբեջանի արտաքին գործերի նախարար:

[10] Քարցիվաձե Նիկոլոզ (1884–1937) – 1918 թ. նշանակվել է Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ: 1919–1920 թթ. զբաղեցրել է Վրաստանի արտաքին գործերի նախարարի օգնականի (տեղակալ) պաշտոնը:

[11] Մախարաձե Գերասիմ (1881–1937) – 1919 թ. հուլիսի 27-ին նշանակվել է ՀՀ-ում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ՝ պաշտոնավարելով մինչև 1920 թ. ապրիլը, այնուհետև՝ Խորհրդային Ռուսաստանում Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ:

յակ եմ պահում, խնդրում եմ ձեռնարկեք բոլոր նախազգուշական միջոցները ռազմական բախումից խուսափելու համար: Մենք հեռագրով հրահանգել ենք [Գ.] Ալշիբայային՝ կիրառել ամեն միջոց և համոզել Ադրբեջանի կառավարությանը, որ իրենց մտադրության իրականացումն ուղղակիորեն աղետալի կլինի ողջ Անդրկովկասի համար:

Նախարարի տեղակալ՝ [Ն.] Քարցիվաձե»:

Հոկտեմբերի 27-ին Բաքվից՝ [Գ.] Ալշիբայայից, ստացվել է հետևյալ հեռագիրը. «Ինչպես իմ ձեռնարկած բոլոր միջոցառումներին՝ Զանգեզուրի գավառում ռազմական բախումն անխուսափելի է: Հայերն ամրացել են Տեղում և Գորիսում: Ադրբեջանական բանակը երեք ուղղություններով առաջ է շարժվում՝ հայկական դիրքերը կամարաձև շրջափակման մեջ վերցնելու նպատակով: [Ն.] Ուսուբբեկովի[12] հետ զրույցի ընթացքում ինձ պարզ դարձավ, որ Ադրբեջանի կառավարությունը բրիտանացիների հովանավորությամբ որոշել է ռազմական գործողություններ սկսել»:

Նոյեմբերի 4-ին Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը Ադրբեջանի և Հայաստանի կառավարությունների ներկայացուցիչներին[13] հետևյալ նոտան է հղում. «Մեր տեղեկություններով՝ երկու հարևան հանրապետությունների՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև Զանգեզուրի գավառում հնարավոր զինված ընդհարման մասին լուրեր են տարածվում: Վիճելի հարցերն այս կերպ լուծելու փորձը կխաթարի Անդրկովկասի ժողովուրդների խաղաղության ու ստեղծագործ աշխատանքի ճգտումը և, անկասկած, կործանարար ազդեցություն կունենա անկախության շեմին գտնվող հանրապետությունների ընդհանուր ճակատագրի վրա, քանի դեռ վերջիններիս անկախությունը չի ստացել միջազգային պաշտոնական ճանաչում ու կավելացնի ևս մեկ օղակ դժբախտ իրադարձությունների շղթային, որից օգտվում են Անդրկովկասի հանրապետությունների ընդհանուր թշնամիները՝ առաջադեմ աշխարհի առջև ծաղրելով այս հանրապետությունների կենսունակությունը: Անդրկովկասյան հանրապետությունների միջև նոր ռազմական բախումը կդառնա մեր նկատմամբ անվստահության և արդարացի նախատինքի պատրվակ նրանց[14] կողմից, ովքեր ներկայումս տիրապետում են ողջ տարածաշրջանի քաղաքական նժարներին և նոր խոչընդոտ կստեղծեն Անդրկովկասի հանրապետությունների անկախության հարցի ցանկալի լուծման համար: Ուստի միայն ընդհանուր և միահամուռ համագործակցության ու ներքին խաղաղության և պետության հզորացման արդյունքում Անդրկովկասի ժողովուրդները կարող են հաղթահարել բազմաթիվ խոչընդոտներ, ապրել արդարացի պահանջներով և թշնամիներից խլել իրենց համար գերեզմաններ փորող զենքը: Մենք կարծում ենք, որ խաղաղ հաշտեցումը միակ ցանկալի և համապատասխան ճանապարհն է անդրկովկասյան բոլոր հանրապետությունների

---

[12] Ուսուբբեկով Նասիբ-բեկ (1881–1920) – 1919 թ. ապրիլից 1920 թ. մարտը եղել է Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության վարչապետ և ներքին գործերի նախարար:

[13] Այն է՝ Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Լևոն Եվանգուլյանին և Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչի պարտականությունները կատարող (տեղակալ) Ֆարիս-բեկ Վեքիլովին:

[14] Այն է՝ Անտանտի ներկայացուցիչների:

շահերի համար, հետևաբար՝ խնդրում ենք տեղեկացնել ձեր ներկայացրած կառավարությանը՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև վեճը փոխադարձ համաձայնությամբ կամ պարտադիր արբիտրաժով լուծելու մեր առաջարկի մասին»:

Նոյեմբերի 5-ին Վրաստանի արտաքին գործերի նախարարը Փարիզի կոնֆերանսի գերագույն հանձնակատարին, Մեծ Բրիտանիայի գերագույն հանձնակատարին, Ֆրանսիայի և Իտալիայի առաքելությունների ղեկավարներին հղում է հետևյալ նոտան. «Մեր տեղեկություններով՝ Զանգեզուրի գավառում այնպիսի լուրեր են պտտվում, որոնք, անշուշտ, վատ հետևանքներ են ունենալու: Կարծում ենք, որ Անդրկովկասի հանրապետությունների միջև առկա բոլոր թյուրիմացություններն ու ապակողմնորոշումը կարող են հարթվել պայմանագրով, և անցանկալի ենք համարում վիճելի հարցերը զենքով լուծելու փորձը: Ուստի մենք փորձել և փորձում ենք համոզել Հայաստանի ու Ադրբեջանի Հանրապետությունների կառավարություններին, որպեսզի Զանգեզուրի գավառում իրենց միջև ծագած վեճը խաղաղ ճանապարհով հանգուցալուծեն:

Բայց քանի որ մենք մեծ հույս չունենք, որ մեր միջնորդությունը ցանկալի արդյունք կունենա, հետևաբար պատիվ ունենք խնդրելու ձեզ՝ օգտագործել ձեր ողջ ազդեցությունը, որպեսզի Հայաստանի ու Ադրբեջանի միջև զինված հակամարտություն տեղի չունենա, ամեն գնով խուսափել դրանից և հնարավորության դեպքում Անտանտի այլ ներկայացուցիչների հետ կոլեկտիվ հայտարարությամբ դիմել նշված հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու համար»:

Նոյեմբերի 5-ին Բաքվում Վրաստանի ներկայացուցչից ստացվել է հետևյալ հեռագիրը. «Այսօր՝ նոյեմբերի 5-ին, ադրբեջանական բանակը Զանգեզուրում կհատի Բարկուշատ և Հազարի գետերը: Հայերն ուժեղ ամրացված դիրքեր են զբաղեցնում: Նրանք զորք են հավաքում նաև Ղազախի շրջանում և սպառնում են երկաթգծին՝ ակնկալելով ամերիկյան միջամտությունը: Ադրբեջանի կառավարությունը զորքեր է ուղարկում ճանապարհը պաշտպանելու համար: Ադրբեջանի կառավարության դրդմամբ Շարուր-Նախիջևանի բնակիչները չեն ընդունել ամերիկացի գեներալ-նահանգապետին[15] և պահանջել են դրանցել Օրդուբադի գլխավոր նահանգապետարանում»:

Նոյեմբերի 7-ին արտաքին գործերի նախարարը պարոն [Ջ. Օ.] Ուորդրոպից[16] ստացավ հետևյալ նոտան. «Նորին Գերազանցություն պարոն Եվգենի Գեզեչկորիին:

Նոյեմբերի 8-ին այնտեղից[17] եկել է հետևյալ տեղեկությունը. «Առաջին հարձակումն ավարտվեց գետն անցնելով, սակայն հաջորդ գրոհը հանդիպեց կատաղի դիմադրության, ադրբեջանական բանակը կորցրեց մոտ քսան մարդ: Քրդերը մեծ կորուստներ կրեցին»:

Նորին Գերազանցություն: Նոյեմբերի 5-ի Ձեր № 8282 գրությանն ի պատասխան՝ պատիվ ունեմ տեղեկացնելու, որ այս ընթացքում շատ էի ցանկա-

---

[15] *Դաշնակիցների կողմից Շարուր–Նախիջևանի գեներալ-նահանգապետ էր նշանակվել գնդապետ Էդմունդ Դեյլին: Սակայն տեղական մուսուլմանները հրաժարվել են ճանաչել նրա իշխանությունը:*

[16] *Ջոն Օլիվեր Ուորդրոպը 1919 թ. հուլիսի 22-ին նշանակվել էր Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի գլխավոր հանձնակատար:*

[17] *Այն է՝ Բաքվից:*

նում խաղաղ ճանապարհով կարգավորել այն հարցերը, որոնց մասին գրել էիք ինձ:

Ես կշարունակեմ ապագայում ուղիներ փնտրել և օգտագործել բոլոր միջոցները՝ այս ուղղությամբ ցանկալի արդյունքների հասնելու համար:

Օ. Ուորդրոպ»:

Նոյեմբերի 12-ին Ե. Գեգեչկորին Հայաստանի արտաքին գործերի նախարարից[18] հեռագիր է ստանում հետևյալ բովանդակությամբ. «Պատիվ ունեմ հաստատել Ձեր նոյեմբերի 4-ին № 8248 գրության ստացումը, որն ուղարկվել է մեր հանրապետության Թիֆլիսի ներկայացուցչի անունով: Հայաստանի կառավարությունը քաջ գիտակցում է վիճելի հարցերը զենքի միջոցով լուծելու վտանգավորությունն Անդրկովկասի երիտասարդ հանրապետությունների ապագայի համար: Հայաստանի կառավարությունը մշտապես համարել և այժմ էլ համարում է, որ զինված բախումները սպառնալիք են ողջ Անդրկովկասի ճակատագրի համար: Հայաստանի կառավարությունը, ինչպես նախկինում, այնպես էլ ներկա ժամանակներում եղել և պատրաստ է ապահովելու, որ բոլոր վիճելի հարցերը, հատկապես՝ Զանգեզուրի հարցը, լուծվեն խաղաղ ճանապարհով՝ հաշվի առնելով և ուշադրություն դարձնելով երկու կողմերի շահերին: Հայաստանի կառավարությունը Զանգեզուրի գավառի նկատմամբ ունի պատմական և էթնիկ անձեռնմխելի իրավունքներ: Նա այս իրավունքներն անձեռնմխելի է պահել մինչև համաշխարհային պատերազմի ավարտը՝ օսմանցիների վերջին արշավանքի ժամանակ: Բացի այդ, այս գավառի բնակիչների անսասան կամքը վկայում է, որ Զանգեզուրի բնակիչները նույնպես ցանկանում են այս գավառը միացնել Հայաստանի Հանրապետությանը: Այդուհանդերձ, Հայաստանի կառավարությունը, ելնելով Անդրկովկասի ընդհանուր շահերից և հունվարի 24-ին Խաղաղության կոնֆերանսի նստաշրջանում ընդունված սկզբունքներից, զերծ մնաց Զանգեզուրում նախ բրիտանական բարձրագույն հրամանատարության, ապա Դաշնակիցների գերագույն հրամանատար, գնդապետ [Ու.] Հասկելի[19] կողմից հաստատված կարգը խախտելուց, քանի որ վստահ էր՝ Ադրբեջանի կառավարությունը ևս կիսում է այն կարծիքը, որ Անդրկովկասում խաղաղ մթնոլորտը պետք է պաշտպանված լինի, ինչն Անդրկովկասի ազգերի խնդիրն է, և, իր հերթին, ձեռք կքաշի Հայաստանի դեմ ուղղված ցանկացած ագրեսիվ գործողություններ կատարելուց: Սակայն Ադրբեջանի նախկին ներկայացուցիչն[20] ու նրանց բազմաթիվ գործակալները պարբերաբար անհնազանդություններ են հրահրել և գումարով աջակցել Շարուրում ու Նախիջևանում բնակվող մահմեդականներին, որպեսզի ապստամբություն կազմակերպեն Հայաստանի կառավարության դեմ,

---

[18] *1919 թ. հունիսից 1920 թ. ապրիլը ՀՀ արտաքին գործերի նախարարն Ալ. Խատիսյանն էր:*

[19] *Հասկել Ուիլյամ Նեֆյու (1878–1952) – 1919 թ. հուլիսին նշանակվել է Հայաստանում Դաշնակից պետությունների գերագույն կոմիսար, այնուհետև նրա իրավասությունը տարածվել է ողջ Անդրկովկասի վրա:*

[20] *1919 թ. հունվարի 29-ին Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ էր նշանակվել Մամեդ-խան Թեքինսկին: Պաշտոնավարել է մինչև հոկտեմբերի 10-ը: 1919 թ. հոկտեմբերի 11-ից մինչև 1920 թ. ապրիլի 28-ը հանդիսացել է Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի օգնական:*

ինչը փաստագրված է: Զանգեզուրի պարագայում ևս Ադրբեջանի կառավարությունն ընտրեց մի ճանապարհ, որը սպառնում է ողջ Անդրկովկասի խաղաղ կյանքին ու ամենևին չի ապացուցում վեճը խաղաղ ճանապարհով լուծելու Ադրբեջանի կառավարության անկեղծ ցանկությունը: Ի պատասխան Հայաստանի կառավարության հարցադրմանը՝ ինչո՞վ է պայմանավորված Զանգեզուրի՝ ափամերձ[21] շրջաններում ադրբեջանական զորքերի կենտրոնացումը, Ադրբեջանի կառավարությունը մեզ զուտ ձևական պատասխան տվեց, որը բոլորովին չի համապատասխանում խնդրի էական վիճակին և չի մոտեցնում մեզ՝ երկու հանրապետություններիս, իսկ վիճելի հարցերի խաղաղ հանգուցալուծման հետ կապված գործընթացը, ըստ Ադրբեջանի կառավարության հայտարարության, պետք է միջոց լինի հարևան հանրապետությունների միջև բարեկամական հարաբերություններ հաստատելու համար:

Գիտակցելով Հայաստանի և ողջ Անդրկովկասի ժողովրդի համար ծանր պատասխանատվությունը՝ Հայաստանի կառավարությունը ստիպված է եղել ևս մեկ անգամ դիմել Ադրբեջանի կառավարությանը՝ հրավիրել Հայաստանի ու Ադրբեջանի ներկայացուցիչների համաժողով՝ վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու նպատակով: Ադրբեջանի կառավարությունն ընդունել է այս առաջարկը, սակայն, այնուամենայնիվ, չի դադարեցրել զորք ուղարկել Զանգեզուրի ու Բաշքենդի[22] շրջաններ, և հաղորդվում է, որ Զանգեզուրը զենքով գրավելու ռազմական գործողությունն արդեն սկսվել է: Հայաստանի կառավարությունը կարծում է, որ Ադրբեջանի կառավարությունը չի կարող չհասկանալ ու չգիտակցել ողջ Անդրկովկասի համար նոր արյունահեղության աղետալի հետևանքները, իսկ վերջին պահին էլ իր ձեռքը կվերցնի ռազմական օպերացիան և կկանգնեցնի արդեն սկսված մարտական գործողությունները: Հայաստանի կառավարությունն Ադրբեջան–Հայաստան համաժողովի գումարման վերաբերյալ իր կոչով հստակ ապացուցել է Ադրբեջանի Հանրապետության հետ բարեկամական հարաբերություններ պահպանելու իր անխախտ ցանկությունը, ուստի Հայաստանի կառավարությունը փորձեց բոլոր հնարավոր միջոցները հակամարտության խաղաղ կարգավորման համար, և այս պահին էլ սեփական իրավունքի լիարժեք գիտակցումով ու ապագա արյունահեղության և ողջ Անդրկովկասի համար դրանից բխող աղետալի հետևանքների պատասխանատվությունն ամբողջությամբ կրում է Ադրբեջանի կառավարությունը:

Արտաքին գործերի նախարար՝ [Ա.] Խատիսով»:

Հասկելի տեղակալ [Ջ.] Ռեյն[23] այցելել է արտգործնախարար [Ե.] Գեգեչկորիին և նրան ասել, որ ինքը շատ գոհ է Զանգեզուրի հարցը խաղաղ ճանապարհով լուծելու վրացական կառավարության ձեռնարկած միջոցառումներից:

Նոյեմբերի 14-ին Երևանում Վրաստանի կառավարության ներկայացուցչից ստացել ենք հետևյալ հեռագիրը. «Այսօր ինձ այցելեց Հայաստանի կա-

---

[21] *Այն է՝ Արաքսի հովիտը:*

[22] *Հետագայի՝ Արծվաշենը:*

[23] *Ամերիկացի գնդապետ Ջեյմս Ռեյը Ու. Հասկելի ղեկավարած առաքելության շտաբի ղեկավարն էր և վերջինիս բացակայության ժամանակ փոխարինում էր նրան:*

ռավարության նախագահ Խատիսովը և Վրաստանի կառավարությանը խնդրեց ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Զանգեզուրի շուրջ Հայաստանի ու Ադրբեջանի միջև հակամարտությունը խաղաղ ճանապարհով կարգավորելու համար՝ հակառակ դեպքում, ցավոք, հանգեցնելու է անիմաստ արյունահեղության երկու հարևան ժողովուրդների միջև: Պետք է հաստատակամորեն դիմել, որպեսզի նոյեմբերի 20-ին Բաքվում նախատեսված համաժողովն անպայման կայանա: Հայաստանի ներկայացուցիչներն արդեն մեկնել են Բաքու: Զանգեզուրում բախումն արդեն սկսվել է, և եթե այն չդադարեցվի այս երկուերեք օրվա ընթացքում, ապա պատերազմն անխուսափելի է»:

Նույն օրը Բաքվից ստացանք հետևյալ հեռագիրը. «Զանգեզուրի ռազմաճակատում իրավիճակը բարդացել է: Նոր ուժեր են ուղարկվում՝ հրետանու երեք գումարտակ գնդապետ [Կ.] Զիսեիձեի[24] հրամանատարությամբ: Մուլկևիչը մեկնեց ռազմաճակատ: Ամբողջ ջոկատի պետ է նշանակվել ռազմական նախարար Միխլինսկու[25] օգնականը: Խնդրում ենք բովանդակության մասին զեկուցել ռազմական նախարարին: № 271»:

Գնդապետ [Կ.] Զիսեիձեին Հայաստանի դեմ գործող բանակային ստորաբաժանման ղեկավար նշանակելու կապակցությամբ նոյեմբերի 14-ին Բաքվում Վրաստանի ներկայացուցչին ուղարկվել է հետևյալ հեռագիրը. «Ամեն միջոց ձեռնարկեք, որ գնդապետ [Կ.] Զիսեիձեին Զանգեզուր չուղարկեն: Առհասարակ, պայմանագրի ուժով Ադրբեջանն իրավունք չունի մեր սպաներին օգտագործել ներքին ճակատում: Համոզվեք, որ պայմանագիրը չի խախտվում: Ոչ մի վրացի սպա չպետք է մասնակցի Զանգեզուրի գործողությանը:

Նախարարի տեղակալ՝ [Ն.] Քարցիվաձե»:

Նոյեմբերի 17-ին Բաքվից ստացանք հետևյալ պատասխանը. «№ 8489-ով ուղարկված հեռագրին մանրամասն պատասխան և բացատրություններ է ուղարկել ռազմական կցորդ [Ա.] Նացվալովը[26] գեներալ [Ա.] Զաքարիաձեի[27] անունով: [Ն.] Ուսուբբեկովն ինձ ասաց, որ [Կ.] Զիսեիձեն գտնվում է Ադրբեջանի կառավարության ծառայության մեջ, ուստի պայմանագրի 7-րդ կետը չի կարող վերաբերել նրան: Խնդրում եմ ինձ ուղարկել պայմանագիրը:

Վրաստանի ներկայացուցիչ՝ [Գ.] Ալշիբայա»:

Նոյեմբերի 16-ին Բաքվից Վրաստանի ներկայացուցիչը հայտնել է հետևյալը. «Նոյեմբերի 14-ին ինձ այցելեց Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչի տեղակալ Ատամանովը և խնդրեց ինձ ստանձնել Զանգեզուրի գավառում ռազմական գործողությունների դադարեցման մասին միջնորդությունը՝ արյունահեղությունից խուսափելու համար, որը միտում ունի Զանգեզուրից տարածվել ամբողջ Ղարաբաղում: Նոյեմբերի 15-ին ես հանդի-

---

[24] *Զիսեիձե Կոնստանտին (1853–1920) – ռուսական բանակի գնդապետ: 1918–1920 թթ. ծառայել է Ադրբեջանի զինված ուժերում, 1920 թ. մարտին ստացել է գեներալ-մայորի կոչում:*

[25] *Փաստաթղթում այդպես է: 1918 թ. դեկտեմբերից մինչև 1920 թ. ապրիլը Ադրբեջանի ռազմական նախարարը Սամեդ-բեկ Մեհմանդարովն էր:*

[26] *Նացվալիշվիլի (Նացվալով) Անտոն (ծնվ. 1883 թ.) – 1919–1920 թթ. Բաքվում Վրաստանի ռազմական կցորդ, գնդապետ:*

[27] *Զաքարիաձե Ալեքսանդր (1884–1957) – 1919–1921 թթ. Վրաստանի ռազմական ուժերի գլխավոր շտաբի պետ:*

պեցի Ադրբեջանի արտաքին գործերի նախարար [Մ.] Ջաֆարովի և կառավարության նախագահ [Ն.] Ռասուլբեկովի հետ, նրանց խնդրեցի ռազմական գործողությունները դադարեցնել և վիճելի հարցերը տեղափոխել Բաքվում կայանալիք Հայաստան–Ադրբեջան համաժողովին քննարկելու կամ հիշյալ հարցերը լուծել արբիտրաժային ճանապարհով»:

Կառավարության նախագահ [Ն.] Ռասուլբեկովն իր հերթին ինձ խնդրեց տեղեկացնել Հայաստանի կառավարությանը հետևյալի մասին. «Ադրբեջանի կառավարությունը Զանգեզուրում ռազմական գործողություններ չի իրականացնում: Զանգեզուրն Ադրբեջանի Հանրապետության անբաժանելի մասն է: Այսպես է դիտարկում Ադրբեջանը, ինչպես նաև Դաշնակիցները՝ ի դեմս բրիտանական հրամանատարության: Նույնիսկ խաղաղության կոնֆերանսի գերագույն հանձնակատար գնդապետ Հասկելը ճանաչեց Զանգեզուրի գավառի նկատմամբ մեր լիարժեք իրավունքը: Նախիջևանի հարցով համաձայնագրի[28] կետերից մեկում նա Հայաստանի կառավարությունից պահանջել է օգնել Ադրբեջանի կառավարությանը՝ Զանգեզուրի գավառում ապստամբական շարժումը խաղաղ ճանապարհով վերացնելու համար, և, ի վերջո, Զանգեզուրի գավառի հայ բնակչությանը ենթարկեցնել Ադրբեջանի Հանրապետության կառավարությանը: Ադրբեջանի կառավարությանը հասած վերջին տեղեկությունների համաձայն՝ հայկական կառավարությունը ոչ միայն չի կատարել գնդապետ [Ռ.] Հասկելի հանձնարարությունը, այլև հակառակը՝ իր կանոնավոր զորքերն է ուղարկում Զանգեզուրի գավառ՝ աջակցելու և ամրապնդելու այդ շարժումը: Այս ամենի հետևանքով Ադրբեջանի կառավարությունը ստիպված եղավ ռազմական ուժ ուղարկել Ղարաբաղի գեներալ-նահանգապետին՝ կարգուկանոնը վերականգնելու և անարխիստ-բոլշևիկյան ավազակախմբերի վրա ազդելու համար: Ադրբեջանի կառավարությունը մտադիր է վերջ դնել Զանգեզուրում հայ ապստամբների կողմից մահմեդական գյուղերի ավերմանը, և 60 հազար անօթևան մուսուլման փախստականներին վերադարձնել իրենց հայրենիք և վերականգնել կարգուկանոնը: Մեզ համար անհասկանալի է, – ասել է կառավարության ղեկավար [Ն.] Ռասուլբեկովը, – Հայաստանի կառավարության բողոքը Զանգեզուրի գավառում ռազմական միջոցներ ձեռնարկելու դեմ, մինչդեռ իրենք մինչև օրս զենքով դաժան միջոցներ են ձեռնարկում այն մահմեդականների նկատմամբ, ովքեր չեն ցանկանում ճանաչել իրենց իշխանությունը Սուրմալուում, Երևանի գավառում և Կարսի մարզում: Ի հավելումն՝ կառավարության ղեկավարը և Ադրբեջանի կառավարությունը դեմ չեն հայ-ադրբեջանական համաժողովին, որը նախատեսվում է գումարել այս ամսվա 20-ին, Բաքվում: Կառավարության նախագահն ինձ խնդրեց այս ամենի մասին տեղեկացնել Վրաստանի կառավարությանը:

Ադրբեջանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ՝ [Գ.] Ալչիբայա»:

---

[28] *Խոսքը Շարուր–Նախիջևանում ու Դարալագյազում չեզոք գոտի ստեղծելու՝ Ադրբեջանի վարչապետ Ն. Ռասուլբեկովի և Հայաստանի գերագույն կոմիսար նշանակված Ռ. Հասկելի միջև 1919 թ. օգոստոսի 29-ին ստորագրված համաձայնագրի մասին է:*

Վերջին անգամ նոյեմբերի 17-ին Բաքվից ստացանք հետևյալ հեռագիրը. «Այսօր՝ նոյեմբերի 17-ին, հանդիպեցի արտաքին գործերի նախարար [Մ.] Ջաֆարովին և վարչապետ [Ն.] Ռասուլբեկովին: Մեր, [Ջ. Օ.] Ռորդրոպի ու [Ջ.] Ռեյի միջնորդության շնորհիվ նրանք համաձայն են ծայրահեղ պայմաններում դադարեցնել ռազմական գործողությունները Զանգեզուրում: Որպեսզի ռազմական բախումները դադարեցվեն, [Ն.] Ռասուլբեկովը, Մամեդ-Հասան Հաջինսկին[29] և ես վաղը երեկոյան ժամը 9-ին արագընթաց գնացքով գալիս ենք Թիֆլիս:

[Գ.] Ալշիբայա»:

Նոյեմբերի 19-ին Թիֆլիս են ժամանել Ադրբեջանի կառավարության նախագահ [Ն.] Ռասուլբեկովը և Հայաստանի կառավարության ղեկավար [Ա.] Խատիսովը:

Ինֆորմացիոն բաժնի վարիչ՝ (ստորագրություն)

ՎԱԱ, ֆ. 1864, ց. 2, գ. 79, թթ. 1–5 շրջ.: Բնագիր: Մեքենագիր:

---

[29] *Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության արտաքին գործերի առաջին նախարար (1918 թ. մայիս–հոկտեմբեր): 1919 թ. դեկտեմբերի 22-ին նշանակվել է ներքին գործերի նախարար:*